ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸՇՁԲ-12/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ

ք. Երևան

31.01.2017թ.
ժամը 11[00]

Բացողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ֆինանսական վարչության ֆինանսական հոսքերի բաժնի 1-ին կարգի մասնագետ, ՔՀՇ 3-րդ դասի առաջատար ծառայող Ս. Սալայան,
ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության ՀԿ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Ավագյան:

Օրակարգը՝

1. **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԲԸՇՁԲ-12/1»** ծածկագրով բաց ընթացակարգին **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում ներկայացված հայտերը:

Սահմանված ժամկետում **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում բեռնվել են ներքոհիշյալ մասնակիցների հայտերը, որոնք սահմանված կարգով հաստատվել և ներկայացվել են գնահատման հաջորդ փուլ.

Սահմանված կարգով ներկայացված մասնակիցների հայտեր, որոնք ընդունվել են **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքի կողմից և համարվել են հետագա գնահատման համար ընդունելի .

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«ԳԵՎՏԻԳ» ՍՊԸ
2	«Դիվանյան Փրոդաքշն» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

բացող Ս. Սալայան

բացող Ա. Ավագյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԲԸԾՁԲ-12/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

31.01.2017թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Գնահատողներ
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կոլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյան,
ՀՀ ՊՆ ՌՈ հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյան,
ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության ՎՏԱ բաժնի պետ, Կ. Պողոսյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա.Ամիրյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԲԸԾՁԲ-12/1» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Ամիրյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-12/1» ծածկագրով բաց ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-12/1» ծածկագրով բաց ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-12/1» ծածկագրով բաց ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել երկու մասնակից.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«ԳԵՎՏԻԳ» ՍՊԸ
2	«Դիվանյան Փրոդաքշն» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-12/1» ծածկագրով բաց ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

(Ա. Ամիրյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 «ԳԵՎՏԻԳ» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-12/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին): «Դիվանյան Փրոդաքշն» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում ԲԸԾՁԲ-12/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), վճարման պահանջագիրը լրացված չէ սույն ընթացակարգի հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմաններին և լրացման կարգին» համապատասխան, մասնավորապես՝ վճարման պահանջագրի 2-րդ կետում նշված է ներկայացման ամսաթիվ, ինչը պարտադիր լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը: Ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Դիվանյան Փրոդաքշն» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվ ել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Ամիրյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 2 մասնակից .

Հ/Հ	Ծառայության անվանումը	Հ/Մ	Քանակը	Նախահաշվ. գինը	«ԳԵՎՏԻԳ» ՍՊԸ-ի գնային առաջարկ		«Դիվանյան Փրոդաքշն» ՍՊԸ-ի գնային առաջարկ		1-ին տեղ զբաղեցնող մասնակից
					առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	
1	Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ (ՀՀ ՀՈՒ կազմավորման օր)	դրամ	1	Գնումն իրականացվում է օրենքի 14-րդ հ 7-րդ կետի հիման վրա	3083333	3700000	3800000	3800000	«ԳԵՎՏԻԳ» ՍՊԸ

«Դիվանյան Փրոդաքշն» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կոմից մերժվել է: Ըստ ներկայացված տեղեկությունների «Դիվանյան Փրոդաքշն» ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող չէ:

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸՀԾՁԲ-12/1» ծածկագրով բանակցային ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Ամիրյան)

4.1 07.02.2017թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-12/1» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ԳԵՎՏԻԳ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-12/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Ամիրյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Ամիրյան)

6.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-12/1» ծածկագրով բաց ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ սույն ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ), գնդապետ — Վ. Գասպարյան

Գնահատող, — Գ. Ուստյան

մայոր — Ա. Հակոբյան

Կ. Պողոսյան

Գնումների համակարգող՝ — Ա. Ամիրյան